«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի դերը կրթական բարեփոխումներում
ԱՌԱՐԿԱ	Դասավար
ՀԵՂԻՆԱԿ	Էնզելի Առաքելյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ծիլքարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..…….…… **3**

ԳԼՈՒԽ 1. Ուսուցչի դերը կրթության համակարգում

1.1. Կրթական բարեփոխումները Հայաստանում……..……5

1.2. ՈՒսուցչի դերը XXI դարում.....9

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս

2.1. Հետազոտության իրականացում և փորձարարական աշխատանքի նկարագրություն……..……13

2.2. Հետազոտության արդյունքների վերլուծություն.....20

Եզրակացություններ……....21

Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ամբողջ աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտի բարեփոխումները նոր խնդիրներ են առաջադրում ուսուցչին: Ավելի քան քսան տարի շարունակվող բարեփոխումներից դժգոհում են բազմաթիվ ուսուցիչներ, կրթության ոլորտի մասնագետներ: Ո՞րն է ելքը: Ինչպե՞ս արդյունավետ դարձնել բարեփոխումների գործընթացը և կրթության որակ ապահովել: Եթե ուսուցիչը պասիվ կատարողից չդառնա ակտիվ մասնակից, չգիտակցի իր դերը, իր մասնակցության անհրաժեշտությունը այդ գործընթացում՝ որպես բարեփոխումներ իրականացնող, նախաձեռնող, վերլուծող, ինքնուրույն ընտրություն և որոշումներ կայացնող, դրանց հնարավոր հետևանքները կանխատեսող, համագործակցող, գործընթացի արդյունավետությունն ապահովող, բարեփոխումները անարդյունավետ չեն լինի:

Ակնհայտ է, որ գնալով ավելի է բարձրանում հասարակության կողմից ժամանակակից ուսուցչի անձին ներկայացվող պահանջների սանդղակը: Այսօր այլևս մեզ չի բավարարում ուսուցչի՝ <<գիտելիքի փոխանցողի>> և սովորողի՝ <<գիտելիք ընդունողի>> դերը, այսինքն՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունները աստիճանաբար իրենց տեղն են զիջում <<սուբյեկտ-սուբյեկտ>> փոխհարաբերություններին: Գիտելիքի ձեռքբերման այդ գործընթացը ավելի արդյունավետ կերպով կարելի է կատարել ինֆորմացիոն-տեղեկատվական միջոցների օգնությամբ:Ուսուցչի խնդիրը մնում է սովորողին <<սովորել սովորեցնելը>>, սովորեցնել՝ ինչպես ինքնուրույնաբար, առանց ուսուցչի սովորել, զարգացնել սովորողների հաղորդակցման, միջանձնային հարաբերությունների հաստատման և դրանց պահպանման, ճանաչողական և ինքնաճանաչման, գնահատման և ինքնագնահատման, վստահություն և ինքնավստահություն ձեռք բերելու հմտությունները: Մեծագույն մարտահրավերը որին առնչվում է այսօրվա մանկավարժը, սովորեցնելն է այսօրվա երեխաներին ու երիտասարդներին

կողմնորոշվելու տեղեկատվության բազմազանության մեջ: Մեդիատեղեկատվական գրագիտության ուսուցման համար կիրառվում են բազմազան մեդիա գործիքներ,որոնց հիմնական բաղադրիչներն են ուսումնադաստիարակչական նպատակներն ու մեթոդները, ինչպես նաև ուսուցիչ-սովորող համագործակցությունը: Լրատվական և տեղեկատվական գրագիտության ձևավորումը չի տարբերվում ուսուցման կազմակերպման մյուս ձևերից, որոնց հիմքում ընկած է աշխատանքը սովորողների հետ:

Դրա համար անհրաժեշտ է ուսուցիչ, ով կսովորեցնի մտածել՝ընտրելով կոնկրետ մեդիառեսուրսներ, կուղղորդի սովորողներին հուսալի տեղեկատվություն ձեռք բերելուն:

Բազմակողմանի մոտեցումները, մեդիաաշխարհի հնարամիտ օգտագործումը ուսուցչի աշխատանքում հարուստ է մի շարք առավելություններով:

Պարտադիր չէ, որ ուսուցիչը տիրապետի այսօրվա սերնդի ողջ մեդիամշակույթին, պարտադիր չէ, որ ուսուցիչը լինի տեխնիկական հանճար, բայց նա պետք է կարողանա խորհուրդներ տալ համացանցից օգտվելու էթիկայի վերաբերյալ, ելնելով սեփական փորձից [22, էջ 17-19]:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ բարեփոխումների գործընթացում ուսուցչի դերի բացահայտումն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

- Ուսումնասիրել հիմնախնդրին վերաբերող մանկավարժական գրականությունը:
- Հստակեցնել ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները՝ կրթական բարեփոխումների համատեքստում:
- Ստեղծել ժամանակակից ուսուցչի մոդել:
-

ԳԼՈՒԽ 1. Ուսուցչի դերը կրթության համակարգում

1.1. Կրթական բարեփոխումները Հայաստանում

Դպրոցը իր սկզբնավորման ժամանակներից միշտ եղել է հայ ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

ՀՀ կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանը և զարգացմանը:

ՀՀ հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումները պայմանականորեն կարելի է բաժանել 2 փուլի[a]

- 1998-2002թթ - արմատական կառուցվածքային բարեփոխումներ և բովանդակային բարեփոխումների համար հիմքերի ստեղծում,
- 2003 թվականից հետո - բովանդակային բարեփոխումներ և կառուցվածքային բարեփոխումների շարունակում:
- **Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլը**
- Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ, որն էլ իր հերթին պայմանավորված է համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող անշրջելի վերափոխումներով: XXI դարի սկզբին համաշխարհային տնտեսության, գիտության զարգացման տեմպերը շատ ավելի բարձր են, քան երբևէ: Բարձր տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրումը և օգտագործումը հանգեցնում են աշխատանքի համաշխարհային շուկայի կառուցվածքային փոփոխությունների: Աշխատուժի նկատմամբ ձևավորվում են նոր

պահանջներ, նվազում է ցածր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկը, փոխարենն ավելանում է որակավորված մասնագետներինը, կատարվում է մասնագետների ինտենսիվ տեղաշարժ:

Այս պայմաններում կրթության գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքների հաղորդումն ու ուսուցումն է, այլև արագ որոշումներ ընդունելու, ակտիվ հաղորդակցվելու և ողջ կյանքի ընթացքում սովորելու ունակ քաղաքացու ձևավորումն է:

Կրթության ոլորտի ներկա բարեփոխումների հիմնական նպատակներն են.

- հանրակրթության որակի բարձրացումը,
- հասարակության ու տնտեսության արդի պահանջներին ու միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշներին Հայաստանի կրթության համակարգի համապատասխանության ապահովումը,

Բարեփոխումները ընթանում են հետևյալ հիմնական ուղղություններով

1. Հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի մշակում և ներդնում:

Այս գործընթացի նպատակն է բարձրացնել հանրակրթության որակը:

2. Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիայի ներդրում հանրակրթության համակարգում:

Այս գործընթացի նպատակն էª ՏՀՏ-ի օգտագործման միջոցով բարձրացնել սովորողների առաջադիմությունն ու կատարելագործել դասավանդման որակըª նպաստելով դասապրոցեսի ժամանակային և տարածքային սահնամափակումների վերացմանը:

3. Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում:

Այս գործընթացի նպատակն է բարձրացնել ուսուցման և յուրացման գործընթացի որակը դպրոցում բարելավելով ուսուցիչների մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները:

Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում

Բարեփոխումները կյանքի կոչելու գրավականներից կարևորագույնը ուսուցիչների մասնագիտական կատարելագործումն է: Հանրակրթության

բարեփոխումների կենտրոնում տեսնելով ուսուցչին, խիստ կարևորվում է նրա շարունակական մասնագիտական զարգացումը:

Նոր կրթակարգի, ծրագրերի, չափորոշիչների, գնահատման ձևերի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով իրականացվում են ուսուցիչների վերապատրաստումներ ըստ առարկաների:

Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Այդ է պատճառը, որ «Հանրակրթության պետական կրթակարգ»–ում նշվում է, որ «ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ» [1, էջ 17]: Բավական չէ բարեփոխումների անհրաժեշտության և դրանց մասնակցելու կարևորության գիտակցությունը: Շատ կարևոր է, որ ուսուցիչը գտնի և որոշի այդ գործընթացում իր մասնակցության չափն ու սահմանները՝ ելնելով իր մասնագիտական և քաղաքացիական պարտականություններից ու պահանջմունքներից: Այս առումով անհրաժեշտ է նորից ու նորից կատարելագործել ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բովանդակությունը այն նկատառումով, որ դրանք ավելի գործնական բնույթ ունենան և նպաստեն ուսուցիչների՝ ինչպես մասնագիտական կարողությունների կատարելագործմանը, ընդհանուր զարգացմանը, այնպես էլ նրանց ակտիվ մասնակցության ապահովմանը՝ կրթության ոլորտի ժամանակակից հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների փնտրման գործընթացում: Ցավոք պետք է արձանագրել, որ ուսուցչության մեծ մասը տեղյակ չէ մեր երկրում իրականացվող ո'չ կրթական քաղաքականության և ո'չ էլ կրթության բնագավառի պետական քաղաքականության սկզբունքներին:

Ուստի, որպեսզի ուսուցիչը հասկանա և համոզվի, որ վերապատրաստումը իր իրավունքն ու պարտականությունն է, անհրաժեշտ է ուսուցչի կատարելագործման գործընթացը ուղղել նաև նրա քաղաքացիական, իրավական գիտակցության և

իրազեկության բարձ բացման վրա: Դասընթացն ավարտելուց հետո նա պիտի զգա, որ ոչ միայն գիտի օրենքով ամրագրված իր իրավունքներն ու պարտականությունները, այլև պատ բաստ է դրանք զուգորդելու և կիրառելու պրակտիկայում: Ոչ միայն ձեռք է բերել իր աշխատանքը ծրագրելու, ուսուցման գործընթացը արդյունավետ իրականացնելու ուղղությամբ նոր գիտելիքներ, այլև փոփոխություն է կատարվել նաև իր մտածելակերպի մեջ, որ նորովի է նայում աշակերտին, ուսուցիչ–սովորող հարաբերություններին, գնահատման գործընթացին, պատրաստ է կատարելու սովորողների իրավունքների պաշտպանի, նրանց «համաձևավորողի», նրանց օգնողի, խորհրդատուի դերերը, գիտակցում է սեփական աշխատանքի արդյունքները մշտապես վերլուծելու, սեփական պլանները վերանայելու անհրաժեշտությունը և այլն: Վերապատրաստման դասընթացը ուսուցչին պետք է նաև սովորեցնի տեսնել, գտնել կրթության ոլորտում, ընդհանրապես, և իր աշխատանքում, մասնավորապես, առկա թերությունները և մտածել ու պայքարել դրանց վերացման համար [4, էջ12] :

1.2. ՈՒսուցչի դերը XXI դարում

Ժամանակակից հանրակրթական դպրոցը իրագործում է բարդ ու բազմակողմանի մանկավարժական գործընթաց, որը նպատակաուղղված է համակողմանիորեն և ներդաշնակորեն զարգացած նոր սերունդ դաստիարակելուն: Այդ գործում առաջատար ու վճռորոշ դերը պատկանում է ուսուցչին: Նա դպրոցականների ուսուցման ու դաստիարակության բարդ համակարգի կենտրոնական դեմքն է:

Ուսուցչի հեղինակությունը, հուզական ներգործությունների ուժը իր սաների վրա, անձնավորության վարակիչ դերը կախված են նրա գաղափարաքաղաքական պատրաստվածության, համակողմանի կրթվածության և ընդհանուր կուլտուրայի մակարդակից: Այս հանգամանքը ուսուցչին պարտավորեցնում է պարբերաբար կատարելեգործել իր գիտելիքներն ու կարողությունները, բարձրացնել իր մասնագիտական որակավորումը:

Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևոր, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր է սովորողներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև սովորողների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խորը ընկալում: Դասագրքում ամփոփված նյութերի բովանդակությունը պատմելը կամ կարդալը դեռ ուսուցանել չէ: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող ակտիվ և բարդ գործընթաց է: Ուսուցիչը պետք է ուղղորդի, ստեղծի ուսումնառության համար նպաստավոր միջավայր, աջակցի և մտածել սովորեցնի [16, էջ 47]:

Մանկավարժական գործունեությունը ուսուցչի մասնագիտական ակտիվությունն է, որում սովորողների վրա մի շարք ներգործության միջոցների օգնությամբ լուծվում են նրանց ուսման և դաստիարակման խնդիրները: Ուսուցչի գործունեության տարբեր ձևեր են առանձնացվում՝ ուսուցանող, դաստիարակող, կազմակերպող, ղեկավարող, խորհրդատվական դիագնոստիկ, ինքնակրթության գործունեություն: Ուսուցչի գործունեության ամբողջական հոգեբանական կառուցվածքը իր մեջ ներառում է

մոտիվացիոն կողմնորոշման օղակը, երբ մարդը կողմնորոշվում է նոր իրադրությունում, իր առջև դնում է խնդիրներ և նպատակներ, նրա մոտ ծագում են մոտիվներ, ինչը գործունեությանը պատրաստվելու փուլն է: Երկրորդը կենտրոնական կատարողական օղակն է, որտեղ մարդը իրագործում է գործողություն, հանուն ինչի սկսել է այդ գործունեությունը: Երրորդը վերահսկող-գնահատող օղակն է, երբ մարդը մտովի ետ է նայում և իր համար պարզում, թե արդյոք եղած միջոցների օգնությամբ լուծել է նա իր առջև դրված խնդիրները [15, էջ 36]:

Ժամանակակից պայմաններում մեծանում է մարդկանց և առանձնապես ուսուցիչների պատասխանատվությունը հասունացող սերնդի քաղաքական կրթության ու դաստիարակության գործում: Այժմ պահանջվում է դպրոցականներին սովորեցնել, դիտարկել արդիականության բարդ սոցիալական երևույթներն ու գործընթացները, նրանց մեջ դաստիարակել անհանդուրժողականություն բացասական բոլոր երևույթների դեմ: Ուստի ուսուցչի քաղաքական ինքնակրթությունը և նրա քաղաքական կուլտուրայի զարգացումը դարձել է հրամայական պահանջ :

Արդի պայմաններում պահանջվում է բազմակողմանի մոտեցում, ինչպես ուսուցմանը և դաստիարակությանը, այնպես էլ ինքնակրթությանը :

Այսպիսով, մեր հասարակության անշեղ զարգացումը, դրա հետ կապված այն նոր խնդիրները, որ ծառայում են մեր դպրոցի առաջ, ներկայացնում են նոր, առավել բարձր պահանջներ ուսուցչի գիտելիքներին, հմտություններին և մանկավարժական վարպետությանը:

Ժամանակակից կրթական համակարգում տարրական դպրոցի կոմպետենտ ուսուցչի պատրաստումը համարվում է արդիական խնդիրներից մեկը: Անընդհատ փոփոխվող ժամանակակից դպրոցը կոմպետենտ,մրցունակ մանկավարժների կարիք է զգում, ովքեր ունակ են ստեղծագործաբար լուծել մասնագիտական խնդիրները, ինքնուրույն հայթայթել գիտելիքներ, կիրառել դրանք և ձևավորված մանկավարժական կարողություններով՝ պատրաստ կլինեն մասնագիտական կատարելագործմանը:

Կրթության ոլորտի բարեփոխումները՝ ուղղումներ մտցնելով ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հասկացության էական բնութագրիչներում, նոր պահանջներ են առաջ քաշում տվյալ ոլորտի կոմպետենտ մասնագետի ձևավորման հարցում [6, էջ19]:

Ժամանակակից կրթական հայեցակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի գործունեության բաղադրիչների, գործառույթների փոփոխություն,այլ նաև՝ նրա անձնային որակների: Մի շարք հեղինակներ առանձնացրել են թե՛ ժամանակակից ուսուցչի ընդունակությունները և թե՛ նրա անձնային-մասնագիտական որակները:

Մանկավարժական ընդունակություններն՝դա անձնային որակ է, որը դրսևորվում է աշխատանքի նկատմամբ հետաքրքրությամբ, սերը դեպի երեխաները, պահանջմունք շփվելու նրանց հետ և այլն: Շատ հաճախ պրակտիկայում մանկավարժական ընդունակություններն դրսևորվում են մարդու կողմից իրականացվող կոնկրետ գործողություններով՝ մասնավորապես գեղեցկախոսությամբ, երեխայի գործունեության կազմակերպմամբ և այլն, որը կարող է մեկնաբանվել իբրև մանկավարժական ընդունակություն:

Մանկավարժը պետք է լինի աշխատասեր, անընդհատ հարստացնի իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները: Այսինքն շատ կարևոր մասնագիտական որակներ են համարվում՝ աշխատասիրությունը, աշխատունակությունը, կամային հատկանիշները, համակարգվածությունը և պատասխանատվությունը կատարած աշխատանքի համար, կարողանալ նպատակներ դնել և գտնել դրանց իրականացման ուղիներ, կազմակերպվածությունը, համառությունը, անընդհատ և պլանավորված սեփական մակարդակի մասնագիտական զարգացումը, սեփական աշխատանքի որակը և այլն: Ուսուցչի մասնագիտության մեջ կարևոր տեղ են գրավում նաև նրա անձնային որակները, որոնք փոխվելով մասնագիտականի, վճռորոշ դերակատարում ունեն բարենպաստ պայմանների և մանկավարժական գործընթացում փոխհարաբերությունների առումով: Դրանք հիմք են հանդիսանում ուսուցչի մասնագիտական կոմպետենտության համար:

21-րդ դարը և նոր հազարամյակը ողջ առաջադեմ մարդկության մոտ ասոցիացվում է կյանքի բոլոր ոլորտներում ներդաշնակության և նոր մշակույթի հետ: Համաշխարհային զարգացումը ձեռք է բերել ավելի ու ավելի հստակ

հումանիստական ուղղվածություն: Հասարակության մեջ գլխավոր դերը ուղղված է անձի նոր տիպի՝ ազատ, ստեղծագործորեն մտածող և ներդաշնակորեն զարգացող, ընթացիկ սոցիալական պրոցեսներում գիտակցված և ակտիվորեն մասնակցելու ունակությամբ, ինչպես նաև դրանց վրա դրականորեն ազդող մարդու: Հասարակության նման սոցիալական պատվերի կատարելը պետք է իրականացվի կրթության համակարգի միջոցով:

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս

- **Հետազոտության աշխատանքի նկարագրություն**

Հետազատական աշխատանքս անցկացրել եմ հարցաթերթերի, զրույցի միջոցով, որոնց նպատակն է եղել պարզել ուսուցիչների ներգրավվածությունը բարեփոխումներում և ստեղծել ժամանակակից ուսուցչի մոդել: Հետազոտությանը մասնակցել են վերապատրաստման դասընթացին մասնակից 59 ուսուցիչներ:

Այն հարցին,թե գիտակցում են ուսուցիչները բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իրենց մասնակցության կարևորությունը, հարցվածներից 100%-ը նշել է, որ ցանկացած ուսուցիչ պետք է գիտակցի և ակտիվորեն մասնակցի բարեոխումների գործընթացին:



Հարցարանի երկրոր հարցին՝ ինչպե՞ս ձևավորել մրցունակ, առաքելության զգացողություն ունեցող ուսուցիչների համայնք, հարցվածների 10%-ը նշում է, որ ցանկացած ուսուցչախումբ արդեն իսկ առաքելության զգացողություն ունեցող ուսուցիչների համայնք է: 20%-ը կարծում է, որ պետք է վերանայվի ուսուցիչների աշխատավարձը: 30%-ը նշում է,որ անհրաժեշտ են ժամանակակից տեխնիկայով և գրականությամբ գերհագեցած դպրոցներ և բարձր որակավորում ունեցող մանկավարժներ: 40%-ը կարծում է, որ պետք է լավագույնս լուսաբանել ուսուցիչների դրական փորձը:



Այն հարցին,թե ուսուցիչները մասնակցում են արդյոք կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին, հարցվածների 40 %-ը նշում է, որ ակտիվորեն մասնակցում են,բայց, թե ինչպե՞ս է դրսևորվում ակտիվությունը՝ չեն նշում: 60 %-ը նշում է, որ ԶԼՄ-ների, համացանցի, մեթոդական նյութերի և ամսագրերի միջոցով տեղեկանում են կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին, նաև մասնակցում են վերապատրաստումների և ատեստացիաների:



Այն հարցին, թե ուսուցիչները երբևէ առաջարկություններ արել են բարեփոխումների վերաբերյալ, հարցվածների 30%-ը նշում է, որ որևէ առաջարկություն չի արել: 50%-ը նշում է, որ կատարել է առաջարկություններ դասագրքերի վերաբերյալ, ծրագրերի բեռնաթափման, ծրագրերի մատչելիության, բայց որ ամենազավեշտալին է, ուսուցիչները նշում են, որ առաջարկություններին որևէ արձագանք չի եղել: 20 %-ը նշում է, որ առաջարկություններ կանեն , եթե դրանք պահանջվեն օրենքով:



Այն հարցին, թե ուսուցիչները ներգրավված են արդյո՞ք բարեփոխումներում, հարցվածների 15%-ը նշում է, որ իհարկե կան անտարբեր ուսուցիչներ, սակայն հիմնականում ներգրավված են, ինչը պարզ երևում է ժամանակակից մեթոդների և հնարների ընտրությամբ և դրանց կիրառմամբ դասապրոցեսի ընթացքում: 30%-ի կարծիքով ներգրավված են ուսուցիչները բարեփոխումներում, սակայն պասիվ դիրք են գրավում: 40%-ի կարծիքով բարեփոխումների բուն գործընթացին մասնակցում են ընդամենը մի քանի ուսուցիչներ և լավագույն արդյունքի համար անհրաժեշտ է ընդգրկել ավելի լայն շրջանակ: 15%-ն էլ կարծում է,որ երբեմն լսում են ուսուցիչների կարծիքները բարեփոխումների վերաբերյալ,բայց միևնույն ժամանակ անում են այն ինչ ուզում են,կամ փորձում են կիրառել այլ երկրների առաջավոր փորձը:



Այն հարցին, թե ուսուցիչները ունեն արդյո՞ք ուսումնական նյութի և մեթոդների ընտրության ազատություն,հարցված ուսուցիչների 100%-ը նշել է, որ միանշանակ ունի նման ազատություն:



Այն հարցին,թե օգտվում են ուսուցիչները այդ ազատություններից, հարցվածներից

100 %-ը նշում է, որ օգտվում է մեթոդների ընտրության ազատությունից, իսկ ուսումնական նյութերի ընտրության ազատությունից՝ 0%-ը:



Այն հարցին,թե ինչպիսի՞ն պետք է լինի 21-րդ դարի ուսուցիչը, հարցվածների 50%-ը նշել է, որ 21-րդ դարի ուսուցիչը պետք է լինի իր մասնագիտությանը լիակատար տիրապետող, անկախ, անկաշկանդ: Հարցվածների 30%-ը նշել է, որ 21-րդ դարի ուսուցիչը պետք է լինի ստեղծագործող, ունենա մասնագիտական և անձնային բարձր որակներ:20%-ը նշել է, որ ուսուցիչը պետք է լինի քրիստոնյա,առաքելական եկեղեցու հետևորդ,բարի:



Հարկ է նշնել, որ ասել,թե ակտիվորեն մասնակցում են բարեփոխումներին, բայց չհիմնավորել ասվածը,կամ ասել, որ ԶԼՄ-ների, համացանցի մեթոդական նյութերի և ամսագրերի միջոցով տեղեկանում են կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին դեռ չի նշանակում մասնակցել բարեփոխումներին կամ դրա կրողը լինել: Ատեստացիաների և վերապատրաստումների մասնակցելն էլ չի նշանակում բարեփոխումների մասնակցել, քանի որ ատեստացիաների ու վերապատրաստումների մասնակցելը սահմանված է օրենքով և պարտադիր պահանջ է:

21-րդ դարի ուսուցչի համար բարեփոխումներում իրենց մասնակցության միայն գիտակցումը բավարար չէ: Այսօրվա ուսուցիչը պետք է լինի բարեփոխումներ կատարողը, հեղինակը, ակտիվ մասնակիցը, իսկ իրականում պատկերը լրիվ հակառակն է:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ փորձել եմ կազմել տարրական դպրոցի ժամանակակից ուսուցչի մոդել


Գիտակցի կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը
Լինի բարեփոխումների ակտիվ մասնակիցը, պրոպագանդողը և իրականացնողը
Լինի հանդուրժող,սեփական կարծիքն ունենա թե՝ մանկավարժության,թե դասավանդած առարկայի ցանկացած հարցի վերաբերյալ
Ունենա կատարելագործվելու ցանկություն,դառնա ինքնազարգացող
Ունենա ինքնավստահություն
Ունենա ինքնուրույն գործելու ունակություն
Ունենա հետաքրքրասիրություն
Ունենա ինքնակրթվելու ունակություն
Ունենա ինքնակրթվելու ունակություն
Ունենա ինքնակրթվելու ունակ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանկավարժական գրականության վերլուծությունից պարզ դարձավ, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումները ընդգրկում են կրթության նպատակների, բովանդակության,կառավարման, ֆինանսավորման և կազմակերպման ձևերի առանցքային փոփոխություններ՝ ամրագրված հատուկ կազմակերպված գործընթացների ռազմավարությամբ և տեխնոլոգիաներով: Սակայն որքան էլ կատարյալ ու անթերի լինեն ներդրվող ռազմավարություններն ու տեխնոլոգիաները, ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, դրանց ոգի ու շունչ տվողն ուսուցիչն է, ուստի նորարարական ցանկացած ծրագրի, ռազմավարության ու տեխնոլոգիայի արմատավորումը, առաջանցիկ քայլերի արդյունքն ուղիղ համեմատական է ուսուցչի պատրաստությանը, նրա մասնագիտական լիարժեքությանը,ցանկությունը, մոտիվացիան:
2. Կրթության որակի ապահովման կարևոր նախադրյալ է ուսուցչի պատրաստվածությունը: Ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման ուսումնական ծրագրերը պետք է նպաստեն, որ ուսումնառության արդյունքում ուսուցիչը տիրապետի.

   ա/ Իր աշխատանքը ծրագրելու կարողությանը

   բ/ Ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողությանը

   գ/Գնահատման կարողությանը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի խրախուսման և նրա շարունակական զարգացումն ապահովող միջոց:

դ/Անդրադարձ /ռեֆլեքսիա/ կատարելու կարողությանը, որպես սեփական աշխատանքի արդյունքները շարունակաբար գնահատելու, սեփական պլանները վերանայելու միջոց:

ե/ Մասնագիտական զարգացման հմտություններին, այդ թվում՝

- ինքնուրույն և գործընկերների հետ մասնագիտական, հետազոտություններ կատարելու, ամփոփելու և եզրակացություններ ներկայացնելու,
- սեփական մասնագիտական զարգացումը պլանավորելու և իրականացնելու:

3. Ժամանակակից ուսուցիչը պետք է՝

1. գիտակցի կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը,
2. լինի այդ գործընթացի ակտիվ մասնակիցը, պրոպագանդողը և իրականացնողը,որի համար՝
   - պետք է մասնակցի բարեփոխումների մշակմանը, քննարկմանը և իրականացմանը,
   - սովորեցնի մտածել՝ օգտագործելով ուսումնական-էլեկտրոնային ռեսուրսների ընձեռած հնարավորությունները,

4. լինի հանդուրժող, սեփական կարծիքը ունենա թե՛ մանկավարժության, թե՛ դասավանդած առարկայի ցանկացած հարցի վերաբերյալ,

5. ունենա՝

- համագործակցելու և հաղորդակցվելու կարողություն,
- երեխայակենտրոն կրթություն իրականացնելու կարողություն,
- նորը ընկալելու, նորովի մտածելու, ստեղծագործելու կարողություն,
- բարոյական բարձր որակներ՝ ազնվություն, անաչառություն, անկողմնակալություն…

6. լինի համագործակցող, ֆասիլիտատոր,
7. լինի երեխայի անհատականությունն ընդունող, իրավունքներն ու ազատությունը հարգող, նրա կարծիքը հաշվի առնող,
8. մշտապես ձգտի կատարելության, լինի ստեղծագործող:

Գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004:

2. Հանրակրթության մասին ՀՀ օրենք, Երևան, 2009:

3. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Ե., 2007:

4. Բալյան Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ, Ե., 1988:

5. Թոփուզյան Ա. Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները,Մանկավարժական միտք,«Զանգակ 97»Ե.,2012 , 3-4 էջ 12

6. ՍիսյանՍ.Բ., Մանկավարժական հաղորդակցում կազմակերպելու ուսուցչի վարպետությունը, Մանկավարժական միտք, «Զանգակ 97» 2008, N2, էջ130-134:

7. Հակոբյան Ս, Զոհրաբյան Ա., Պետրոսյան Ս., Ուսուցչի էթիկայի նորմեր, Երևան, 2014 Հայրունի Հ.,

8. Դպրոցին և հատկապես ուսուցչին է վերապահված ապագայի կերտումը, Նախաշավիղ, «Զանգակ 97» N 2-3 2008թ., էջ 108-115

9. Պոլատ Ե.Ա., Կրթական համակարգերի զարգացման հիմնական միտումները համաշխարհային մանկավարժական պրակտիկայում,Ե 2001թ

10. Վինոգրադովա Ն.Ֆ., Տարրական դպրոցը XXI դարում, Նախաշավիղ, «Զանգակ 97» N 5-6 2006թ., էջ 3-6:

11.Դավթյան Մ,Մարդ և հասարակություն, Ե 2017, № 1 (6 8) էջ 3-5

12.Դավթյան Մ, Կրթության ռազմավարություն. Եվրոպական ութ առանցքային կարողությունները. Մարդ և հասարակությաւն, N 1, 2011թ էջ 5-8

13. Емельянова М.В., Журлова И.В., Савенко Т.Н. Основы педагогического мастерства: Курс лекций для студентов педагогического университета. 2005. – 150 с.

14. Елканов С.Б. Основы профессионального самовоспитания будущего учителя. – М.: Просвещение, 1989. –189 с.

15. Кузьмина Н.В., Очерки психологии труда учителя. Психологическая структура деятельности учителя и формирование его личности.–Л.: 1967. –183с.

16 . http://www.osf.am/wp-content/uploads/2014/03/FinalARMAssessmentPDEC.pdf